

Տ. ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱԿԻՐ ՔՅՆՅ. ԱԻԱԳԵԱՆ

1912 — 1980

Դեկտեմբեր 8, Երկուշաբթի կանուխ առաւօտուն, Բեթղեհէմի Ֆրանսական Հիւանդանոցին մէջ, երկար եւ տանջալից հոգեվարքէ մը ետք իր յաւիտենական բունը մտաւ Ս. Ծննդեան Տաճարի բազմավաստակ ծառայող Արժ. Տ. Գրիգոր Խաչակիր Քահանայ Աւագեանը, որ բաւական ատենէ ի վեր կը տառապէր շաքարախտէ:

Հանգուցեալը, աւագանի անունով Լեւոն, ծնած է Վառնա՝ Պուլկարիա՝ 1912ին: Երուսաղէմ եկած է 1930ին, ուր տառի մը աշակերտած է Ժառանգ. Վարժարանին: Յետոյ ատեն մը ծառայած է իրրեւ Միարան ի Ս. Յարութիւն եւ Ս. Փրկիչ: Ատեն մը հետեւած է ոսկերչութեան: Ամուսնացած է 1948ին, բայց մնացած է անզաւակ: Քահանայ ձեռնադրուած է 1956 Ապրիլ 17ին, Ս. Ծննդեան Տաճարին մէջ, ձեռամբ հանգ. Տ. Հայկազուն Եպս. Արքահամանի, եւ այնուհետեւ իրր ժամարար ծառայած է նոյն Տաճարին, ճշմարիտ հոգեւորականի մը վայել նուիրուածութեամբ:

Տարիներու իր խղճամիտ ծառայութիւնը զինք արժանի կացուցած է նախ Աւագ Քանանայի եւ ապա Խաչակիր Քահանայի տիտղոսներուն:

Հանգուցեալ Տէր Հօր մարմինը Երուսաղէմ փոխադրուեցաւ նոյն օրը: Վերջին օծումն ու թաղումը կատարուեցան յաջորդ առաւօտ՝ Դշ. Յ Դեկտեմբերին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Աւան Վրդ. Ղարիպեանը, իսկ վերջին օծումը կատարեց եւ դամբանականը խօսեցաւ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիկեան, վեր հանելով բարեմասնութիւնները ննջեցեալին, իրրեւ համեստ ու հաւատաւոր պաշտօնեաներէն մէկը Աստուծոյ Սուրբ Տան:

Ժամը 10.30ին կատարուած հանգստեան պաշտամունքին, բազմաթիւ ազգայիններէ զատ, ներկայ եղան նաեւ Ս. Ծննդեան Տաճարի Յունաց եւ Լատինաց Տնտուները, որոնք ապա քնկերացան Գերշ. Տ. Կիրեղ Սրբազանէ զխաւորուած յուդարկաւորութեան թափօրին մինչեւ Ս. Փրկչի գերեզմանատունը, ուր ամփոփուեցաւ հանգուցեալ Տէր Հօր մարմինը, որմէ ետք բոլորն ալ դարձան Հ. Ե. Մ. ի Ակումբ՝ հոգեսուրճ առնելու:

Տէրը իր լոյսերուն մէջ հանգչեցնէ հոգին համեստ իր պաշտօնէին եւ երկնային մխիթարութիւն պարգեւէ այրիացեալ երէցկնոջ եւ իր ազգականներուն:

Կոմիտաս Սրբազանի մահով Մայր Աթոռը կը կորսնցնէ պարտաճանաչ ու շնորհաւատ հոգեւորական մը, որ իր պաշտօնավարութեան ամբողջ տնօրդութեան հոգեւին սիրեց իր գործն ու հօտը, փոխադարձաբար սիրուելով ու յարգուելով անկէ:

Հոգեհանգստեան յատուկ կարգ կատարուեցաւ Հանգուցեալ Սրբազանի հոգւոյն Երուսաղէմի բոլոր եկեղեցիներուն մէջ, Կիրակի, 7 Դեկտ. ին, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգիստ յաւիտենական՝ խոնջած իր ոսկորներուն եւ երանութիւն յաւերժական՝ առաքինազարդ իր հոգիին: